



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՇՈՑՔ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Աշոցք համայնք, գ. Աշոցք
հասցե՝ 2801, գ. Աշոցք, Հրապարակ 1,
հեռախոս՝ (0245)2-10-50, 2-14-82,
էլ. փոստ՝ ashotsq.shirak@mta.gov.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

16 փետրվարի 2023 թվականի N 44 - Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՇՈՑՔ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՅՈՂ, ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ, ԱՇՈՑՔ ՀԱՄԱՅՆՔ, ԳՅՈՒՂ ԹԱՎՇՈՒՏ, 2-ՐԴ ՓՈՂՈՑ, ՀՈՂԱՄԱՍ 27/9 ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐՈՒԹՅԱՆ, ԸՆԴԵՐՔՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԵՎ ԱՅԼ ԱՐՏԱԴՐԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՕԲՅԵԿՏՆԵՐԻ ՀՈՂԵՐ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ԱՐՏԱԴՐԱԿԱՆ ՕԲՅԵԿՏՆԵՐ ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ 1.34447 ՀԵԿՏԱՐ ՄԱԿԵՐԵՍՈՎ 08-041-0001-0044 ԿԱԴԱՍՏՐԱՅԻՆ ԾԱԾԿԱԳՐՈՎ ՀՈՂԱՄԱՍԸ ՈՒՂԱԿԻ ՎԱՃԱՌՔԻ ՄԻՋՈՑՈՎ ՍԱՂԱԹԵԼ ՄԵՐՈՒՓԱՆԻ ՄՈՒՐԱԴՅԱՆԻՆ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Քաղաքացի Սաղաթել Մերուժանի Մուրադյանը դիմել է Աշոցք համայնքի ղեկավարին Հայաստանի Հանրապետություն, Աշոցք համայնք, գյուղ Թավշուտ 2-րդ փողոց, հողամաս 27/8 հասցեում, սեփականության իրավունքով իրեն պատկանող (անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման N 19072022-08-0040 վկայական) հողամասին կից՝ Աշոցք համայնք, գյուղ Թավշուտ, 2-րդ փողոց, հողամաս 27/9 հասցեում գտնվող, արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նշանակության օբյեկտների հողեր նպատակային նշանակության, գյուղատնտեսական արտադրական օբյեկտների հողերի գործառնական նշանակության 1.34447 հեկտար մակերեսով համայնքապատկան հողամասն (վկայական N 31012023-08-0010) անասնաշենքի սպասարկման տարածքի ընդլայնման նպատակով, ուղղակի վաճառքի միջոցով իրեն օտարելու խնդրանքով:

Հայաստանի Հանրապետության կառավարության 2016թ. մայիսի 26-ի թիվ 550-Ն որոշման 1-ին մասի 1-ին և 2-րդ կետերի պահանջներին համապատասխան՝ օտարվող հողամասը գերակշիռ մասով սահմանակից է ընդլայնվող հողամասին:

Քննարկվող հողամասն ընդգրկված չէ Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի կազմում:

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 16-րդ կետով, Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 66-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ և 8-րդ կետերով, Հայաստանի Հանրապետության

կառավարության 2016 թվականի մայիսի 26-ի N 550-Ն որոշման 1-ին մասի 1-ին և 2-րդ կետերով և հիմք ընդունելով Աշոցք համայնքի ավագանու 2023 թվականի փետրվարի 14-ի 4-Ա որոշումը, **որոշում եմ**.

1. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Աշոցք համայնքի վարչական տարածքում գտնվող համայնքային սեփականություն հանդիսացող, Հայաստանի Հանրապետություն, Շիրակի մարզ, Աշոցք համայնք, գյուղ Թավշուտ, 2-րդ փողոց, հողամաս 27/9 հասցեում գտնվող, արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նշանակության օբյեկտների հողերի նպատակային նշանակության, գյուղատնտեսական արտադրական օբյեկտների հողերի գործառնական նշանակության 1.34447 հեկտար 08-041-0001-0044 կադաստրային ծածկագրով հողամասը (վկայական N31012023-08-0010) հողի կադաստրային արժեքով՝ 1909150 (մեկ միլիոն ինը հարյուր ինը հազար հարյուր հիսուն) Հայաստանի Հանրապետության դրամով, ուղղակի վաճառքի միջոցով անասնաշենքի սպասարկման տարածքի ընդլայնման նպատակով օտարել Սաղաթել Մերուժանի Մուրադյանին և Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով քաղաքացու հետ կնքել անշարժ գույքի առուվաճառքի պայմանագիր:

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՇՈՑՔ
ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝**  **Կ. ՄԱՆՈՒԿՅԱՆ**



2023 թվականի փետրվարի 16
գյուղ Աշոցք